ՔԱՂԱՔԱԿԱՆ ՇՐՋԱԴԱՐՁ.

ԻՆՉՈՒ ԵՒ ԻՆՉՊԷՍ

ԼԵՒՈՆ ՇԻՐԻՆԵԱՆ

Այն, որ ԽՍՀՄը գտնւում է օրըստօրէ ահագնացող ճգնաժամի ճիրաններում, կարծում ենք, լրացուցիչ փաստարկումների կարիք չի զգում: Ե՞րբ (եւ երբեւէ՞) կը յաղթահարուի այդ ճգնաժամը, առայժմ դժուար է ասել: Առ այսօր լաւատեսական կանխատեսումներ չեն արւում: Արեւմուտքն իր հերթին Գորբաչովի ակնկալած տնտեսական օգնութեան հարցում չի շտապում, հասկանալով, որ բարեփոխումները տեւական գործընթաց են եւ նրանց չի կարելի օգնել պահելի դրամական գումարների շտապ ներդրումով (Բեյքեր):

Հայաստանի Հանրապետութեան, որպէս ԽՍՀՄի կառուցւածքի մի մասի, վիճակն աւելի ծանր է, քանզի այստեղ առաջին պլանում Հայոց ազգային հարցն է՝ Հայ Դատը: Արնածոր վէրքի է վերածուել Հայոց Արցախը: Հեռանկարն առաւել քան մռայլ է: Չէ որ ազերիները կ'աշխատեն առաւելագոյնս օգտուել նպաստաւոր վիճակից եւ իրենց ուժերի գերակշռութեան պայմաններում մէկընդմիշտ ազատուել Արցախի խնդրից: Երեւի թէ Նախիջեւանեան տարբերակով: Կարելի է ընդունել, որ Կրեմլը յանուն իր շահերի թոյլ չի տայ ամբողջովին հայաթափել Արցախը, սակայն պատմական փորձը ցոյց է տալիս, որ թուրքն առհասարակ կարողանում է օգտուել խառնակ վիճակից եւ ընդհանուրի մէջ լուծել առաջին հերթին սեփական հարցերը: Առաջիկայ վեց ամիսները, անկասկած, լինելով անկման ժամանակաշրջան, այդ իմաստով վտանգաւոր են: Նպաստաւոր է Ադրբեջանի համար նաեւ Անկարա-Մոսկուա անընդհատ ջերմացող մթնոլորտը: Չմոռանանք, Արցախում իրադրութիւնը շեշտակիօրէն սրուեց, հաստատուած անկայուն հաւասարակշռութիւնը խախտուեց Օզալի Մոսկուա եւ Վորալի Երեւան այցից յետոյ: Փաստերն անժխտելի են: Անժխտելի է նաեւ այն, որ առայժմ չկայացած Միացեալ Հայաստանը (Հայաստանի Հանրապետութիւն եւ Հայոց Արցախ) մեր սայթաքումների հետեւանքով աստիճանաբար յայտնուեց Մոսկուա-Բաքու-Անկարա բերմուդեան եռանկիւնում:

Հասկանալի է, որ նման պայմաններում յայտնուած որեւէ ազգ կը վերլուծէր անցած ուղին, կը փորձէր գտնել փոփոխութիւնների միտումները, կ'անէր վճռական հետեւութիւններ... Այդ իմաստով անժխտելի է, որ արցախեան խնդիրը ոչ այսօր է ծնուել, ոչ էլ 88ի Փետրուարին: Այն ռուս-թուրքական մրցակցութեան, Լենին-Աթաթուրք յանցագործ գործարքի հետեւանքն է: Նաեւ Խորհրդային Հայաստանի խամաճիկային համայնավար վարչակարգի ապազգային գործունէութեան եօթ տասնամեակների, որի լուռ համաձայնութեամբ եւ յանցագործ անտարբերութեամբ վերջնականօրէն հայաթափուեց Նախիջեւանը, իրականացուեց Սումգայիթեան եղեռնագործութիւնը, ջարդուեց արցախեան շարժման հզօր թափը...

Անկնկալելի էր, որ արցախեան պահանջատիրական շարժման թեւերին քաղաքական երկնակամար բարձրացած ուժերը, համայնավար նեխած ռեժիմի եւ ապազգային կոմկուսի անխնայ քննադատութեանը համընթաց, որդեգրէին համազգային շահերն ընդգրկող քաղաքական ուղեգիծ: Սակայն, ինչպէս ցոյց տուեցին հետագայ իրադարձութիւնները, հնարաւոր չեղաւ յաղթահարել նախորդ տասնամեակների քաղաքական ուղեբեռը եւ զերծ մնալ հեշտ ուղի «տեղափոխուելու» գայթակղութիւնից:

Նախ, խեղաթիւրուեց Հայոց ազգային հարցը, անկախութեան նուիրական իդէալը հակադրուեց հայոց համար հիմնական՝ հողի, հետեւապէս, Հայրենիքի հարցին: Մինչդեռ «Դէպի Արցախ» կարգախօսով Հայ Դատը թեւակոխում էր բաղձալի եւ անյետաձգելի հանգրուան, երբ թւում էր, թէ նրա լուծումը, վերջապէս, մտնում է բնականոն հուն: Ցաւօք, միայն թւում էր...

Շարժման որոշակի փուլում աննկատ, սակայն հետեւողական միտումով ազգային-պահանջատիրական պայքարը զուգակշռուեց գորբաչովեան «ժողովրդավարական գործընթացով», երեւութապէս գրաւիչ «մեր պայքարը միայն սահմանադրական է» կարգախօսով «հարատեւ կռուի» ազգային ռազմավարութիւնը զրկուեց ազգային հարց չճանաչող սահմանադրական հակասութիւններով... Ընտրուեց հարցի լուծման փակուղային տարբերակը: ժողովրդի եռանդը, ազգային նուիրումը, հոգեկան կորովը վատնուեց աննպատակ: Վատթարագոյն դեր խաղաց յաճախ մեզ վնասած քաղաքական անհամբերութիւնը:

Ծնուեցին գիտականօրէն չըհիմնաւորուած եւ կասկածելի մի շարք համադրոյթներ: Միտինգային թոհուբոհի մէջ «ստեղծագործուեց» կայսրութեան շուտափոյթ կործանման եւ, հետեւապէս, գահավիժող գնացքից արագ թռչելու պատրանքը: Հայաստանը յայտնուեց ազգային իր հիմնահարցերի լուծման համար աննըպաստ բլոկում...

Աւազահատիկի վրայ կառուցուեց «Ելցինեան Ռուսաստան»ի եւ նրա աջակցութիւնը ակնկալող Հայաստանի հնարաւոր դաշինքի կանխադրոյթը: Հայաստանի քաղաքական նոր ղեկավարութիւնը չկարողացաւ ընկալել ռուսական կեանքի առանձնայատկութիւնը: Մինչդեռ հայ քաղաքական միտքը վաղուց էր եզրակացրել, որ «Ռուսիան նման է օվկիանոսի, որ միշտ կ'ուզէ գտնել բնական իր սահմանը, որ դեռեւս չէ գտած: Ինչ կարգ էլ լինի, նա եղած է եւ կը մնայ աշխարհակալ»: Որ «Ռուսիան բաղկացած է երկու խաւէ, ստորինը (գիւղացիներն ու թշուառները) եւ վերինը. երկուսը թշնամի իրարու, բայց երկուսի նշանաբանը մէկ է՝ անսահման տիրապետութիւն, միատիկ վարչութիւն եւ մենատիրութիւն» (ընդգծումը իմն է-Լ.Շ.) (Զաւարեան):

Թերագնահատուեց եւ շարունակւում է թերագնահատուել, մեր կարծիքով, ռուսական գործօնի դերը Այսրկովկասում: Անհիմն պնդում է արւում, թէ նա մօտ ապագայում կը թողնի աշխարհատարածքը: Այնինչ «իրադարձութիւնները Լեռնային Ղարաբաղում եւ նրա շուրջ» ցոյց տուեցին, որ Կրեմլի համար Կովկասը ռազմավարական շրջան է եւ «խորհրդային ղեկավարութիւնը առանձնապէս չի հոգա այն մասին, թէ ինչպիսին կը լինի հասարակական կարծիքը կովկասեան հանրապետութիւններում իր գործողութիւնների մասին», երբ նա առանց տատանման ուժ կ'օգտագործի (տե՛ս «Կոմսոմոլեց», 21 յուլիսի, 1990թ): Իսկապէս: Մոսկուան ուժ օգտագործեց առանց տատանման Ադրբեջանում (1990ի Յունուարին) եւ Հայաստանում (1991ի Մայիսին): Նորից տասնեակներով հոսեց հայորդիների թանկագին արիւնը, ոչնչացուեցին Մարտունաշէն- Գետաշէնը... Իսկ Ռուսաստանում տարածուած է «ծայրայեղական ու անզիջողական» Հայաստանի վտանգաւոր կերպարը: Պատահական չէ, որ Հայաստանի (նաեւ Արցախի) նկատմամբ խորհրդային բացայայտ ագրեսիան յաջորդեց «խորհրդային իննեակի» եւ Գորբաչովի գործարք-դաշինքին, իսկ Հադրութի հայաթափման նոր փուլը սկսուեց Հայաստանի Գերագոյն Խորհրդի նախագահութեան կողմից Նովո-Օգարեւոյի խորհրդակցութեան հրաւէրը մերժելուց յետոյ:

Առաջիկայում սպասելի են Հայաստանի նկատմամբ հզօր ու լայնամասշտաբ տնտեսական ճնշումներ:

Աննկատ անցաւ նաեւ սովետաբանութեանը յայտնի այն եզրակացութիւնը, որ Ռուսաստանում բարեփոխումներին գրեթէ միշտ յաջորդում է հակաբարենորոգչական հզօր շարժում, ինչի ականատեսն ենք մենք այսօր:

Աշխարհի հզօրները այս կամ այն կերպ զօրավիգ են երկպառակութիւններից ցնցուող ու տնտեսական անկում ապրող Խորհրդային Միութեան նախագահին եւ պատրաստ են ներելու նրա «մանկական չարաճճիութիւնները»: Գետաշէնեան սպանդը «աննկատ» մնաց Արեւմուտքի համար: (Զարմանալիօրէն չկարեւորուեց նաեւ Հայաստանում):

«Քաղաքակիրթ ու բարգաւաճ» Թուրքիայի վերաբերեալ մտամարզանքները այսօր լրացւում են «Ադրբեջանի կոմունիստական վարչակարգին» հակադրուող մըտացածին ժողովրդավարական Ադրբեջանի պատրանքով: Մինչդեռ, ինչպէս ցոյց է տալիս հայազերի յարաբերութիւնների պատմութիւնը, թէկուզեւ վերջին հարիւրամեակում, հայկական հարցում կայ ազերի (թուրք) մէկ տեսակէտ՝ պարպել Հայաստանը, ոչնչացնել հայութիւնը: Ով կը փորձի հիմնաւորել այլ տեսակէտ՝ թող յիշի Նախիջեւանի ճակատագիրը, Արցախի վիճակը... Զանգեզուրի ադրբեջանական պահանջատիրական կեցուածքը:

Ուրուագծւում է նաեւ Թուրքիայի դերակատարութիւնը արցախեան խնդրի մէջ: Մի կողմից խրախուսելով (որեւէ ձեւով) Հայաստանի հակակենտրոն տրամադրութիւնները՝ զուգահեռաբար զսպում է անկախութեան աւելի մեծ հնարաւորութիւն ունեցող Ադրբեջանի անջատողական դրսեւորումները: Արդեօ՞ք դրանով չի բացատրւում, նաեւ, առաջին. անկախութեան գործընթացում Հայաստանի առաջատար, իսկ Ադրբեջանի՝ «կրաւորական» դիրքերում յայտնուելը, երկրորդ, Մոսկուա-Երեւան ուղղակի առճակատումը...

Ինչեւէ: Կարելի է երեւի թէ շարունակել փորձի ընդհանրացումը: Սակայն մի բան պարզ է. շարադրուած կանխադրոյթների վրայ կառուցուած քաղաքականութիւնը չի կարող ապահովել հայ ժողովրդի անվտանգ գալիքը, նախապատրաստել նրա անկախութիւնը: Այն կ'արժէզրկի վերջնականօրէն անկախութեան դարերով փայփայած գաղափարը: Ելքը Հանրապետութեան քաղաքական կուրսի արմատական վերանայման մէջ է, իրատեսութեան գիրկ նրա վերադարձի մէջ: Եւ դա հնարաւոր է (քանի կորուստներն աւելի մեծ չեն), թէկուզեւ հոգեբանօրէն դժուար յաղթահարելի: Այսպիսին է ժամանակի հրամայականը եւ ազգային շահի իրապաշտ գնահատականը...